ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

**ՀՀ ԱՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ԵՎ «ՏՈՆՈՒՍ-ԼԵՍ» ՍՊԸ-Ի ՄԻՋԵՎ 06.07.2026թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/37-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «   » Հուլիսի 2026թ.

ՀՀ ԱՆ «Հանրապետական շտապ օգնության ծառայություն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սահակ Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տոնուս-Լես» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սերգեյ Հակոբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 06.07.2026թ. կնքված N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/37-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1. Հիմք ընդունելով պայմանագրի կատարման ապահովումը Պայմանագրով նախատեսված ապրանքների վճարումը կատարվում է ապրանքների ընդունումից **հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում:**

1.2. Կողմերը համաձայնեցին, որ Պայմանագրի Հավելված N 1-ով և Հավելված N 2-ով սահմանված ապրանքների մատակարարումը իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ Պատվիրատուի պահանջի հիման վրա: Առաջին մատակարարումը իրականացվում է մինչև 20 օրացուցային օրվա ընթացքում, իսկ Մատակարարի համաձայնությամբ՝ հնարավոր է նաև ավելի սեղմ ժամկետում: Հետագա յուրաքանչյուր մատակարարումը իրականացվում է Պատվիրատուի գրավոր կամ էլեկտրոնային պահանջը ստանալուց հետո՝ 3 օրացուցային օրվա ընթացքում:

1.3. Սույն համաձայնագրով ուժի մեջ են դրվում Պայմանագրով սահմանված բոլոր քանակները, որոնք ենթակա են մատակարարման սույն համաձայնագրի պայմաններին համապատասխան:

**2. Այլ պայմաններ**

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N «ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/37-1» ծածկագրով Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

2.2. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Հանրապետական Շտապ Օգնության Ծառայություն» ՓԲԸ | «Տոնուս-Լես» ՍՊԸ |
| Հասցե՝ ք.Գյումրի, Մազմանյան 3բ | ՀՀ, ք. Երևան, Վարշավյան 2/1 |
| ՀՎՀՀ 05500411 | Ինեկոբանկ ՓԲԸ |
| «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ | ՀՀ 2050022046961001 |
| ՀՀ 1570078724667200 | ՀՎՀՀ 00064506 |
| Տնօրեն՝ Սահակ Հակոբյան | Տնօրեն՝ Սերգեյ Հակոբյան |
| ------------------------------------------ | ---------------------------------------- |
| (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ. |
| Ստորագրող ՍԱՀԱԿ ՀԱԿՈԲՅԱՆ 3711840906 | Digitally signed by HAKOBYAN LILIT 5910730053 Date: 2026.07.10 14:54:30 AMT |

2026-07-13 14:37:26 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

## ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ք.Երևան

12 մայիսի 2025 թվական

**«ՏՈՆՈՒՍ-ԼԵՍ» ՍՊԸ** (պետական գրանցման համար՝ 264.110.05229, ՀՎՀՀ՝ 00064506), ի դեմս գլխավոր տնօրեն **Սերգեյ Հակոբյանի, /Ն/Ք 018090423, տրվ.՝ 06.06. 2025 թ., 044-ի կողմից** / իր իրավունքները և օրինական շահերը ներկայացնելու կապակցությամբ՝

**Լիլիթ Լևոնի Հակոբյանին** (նույնականացման քարտի տվյալներ՝ 005776315, տրված 03.04.2017, 007-ի կողմից)

## Լ Ի Ա Զ Ո Ր Ո Ւ Մ Է

1. Իր անունից ՀՀ-ում հանդես գալու բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման (հանրային իշխանության համակարգի) բոլոր մարմինների (կազմակերպությունների), դրանց պաշտոնատար անձանց հետ հարաբերություններում, մասնավորապես իր անունից հանդես գալու գնման ընթացակարգերի շրջանակներում այլ անձանց հետ հարաբերություններում, ստորագրել փաստաթղթեր, ընդունել պայմանագրերի կնքման առաջարկներ, մասնակցել հրապարակային սակարկությունների (աճուրդների), ստորագրել պայմանագրեր, ինչպես թղթային տարբերակով, այնպես էլ հատուկ տեխնիկական միջոցներով նույնականացման քարտով իրականացվող եղանակով:

**Սույն լիազորագիրը տրվում է երեք տարի ժամկետով:**

**«ՏՈՆՈՒՍ-ԼԵՍ»**
**ՍՊԸ գլխավոր տնօրեն՝**

Սերգեյ Հակոբյան